ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2018 թվականի N 1186 - Լ

«ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-380-1.10.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկություններին:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 26
Երևան

«ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-380-1.10.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն պատկանող պաշտամունքային շինություններում և դրանց հարող տարածքում արգելել եկեղեցու և նրա ծիսակարգի կամ դավանաբանության դեմ հավաքների կազմակերպումն ու անցկացումը:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ նախագծի ընդունման արդյունքում կհստակեցվեն Հայաստանի Հանրապետության դրական պարտականությունները Հայ առաքելական սուրբ եկեղեցու պաշտպանության ուղղությամբ, և իրավական կառուցակարգեր կձևավորվեն՝ հակազդելու եկեղեցու նկատմամբ հանրորեն վնասակար գործողություններին:

Նախագծի 1-ին հոդվածի կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Սահմանադրության 18-րդ, 41-րդ և 44-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների համադրային վերլուծությանը: Այսպես՝ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:

Վերոնշյալ իրավադրույթների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ հավաքների ազատությունը երաշխիք է սահմանադրական և տարաբնույթ այլ իրավունքների պաշտպանության համար, քանի որ այն հնարավորություն է տալիս անձանց անմիջականորեն մասնակցելու պետական կյանքի կարևորագույն հարցերի առնչությամբ հասարակական կարծիքի ձևավորմանը: Նշված իրավունքը համահունչ է այդ իրավունքի վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիմնադրույթներին: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների հռչակագրի 20-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների և միությունների ազատության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության իրավունք: Հիշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այս իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:

Կոնվենցիայի վերոհիշյալ հոդվածի առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշումներ՝ համաձայն որոնց, մասնավորապես.

- Կոնվենցիայի 11-րդ հոդվածով ամրագրված՝ խաղաղ հավաքների իրավունքը հիմնարար իրավունք է ժողովրդավարական հասարակությունում, և այն, ինչպես և արտահայտվելու ազատության իրավունքը, այդպիսի հասարակության հիմնաքարերից մեկն է (տես՝ Քրիստոնեա-ժողովրդավարական ազգային կուսակցությունն ընդդեմ Մոլդովայի, թիվ 28793/02, §62, ՄԻԵԴ 2006-11).

- պետությունները ոչ միայն պետք է երաշխավորեն խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը, այլ նաև պետք է ձեռնպահ մնան այդ իրավունքի նկատմամբ անհիմն և անուղղակի սահմանափակումներ կիրառելուց: Հաշվի առնելով հավաքների ազատության իրավունքի կարևոր բնույթը և ժողովրդավարության հետ դրա սերտ կապը՝ պետք

է առկա լինեն համոզիչ և ծանրակշիռ պատճառներ՝ այդ իրավունքի իրականացմանը միջամտությունն արդարացնելու համար (տե՛ս Օոտանիո Տոքսոն և այլք ընդդեմ Հունաստանի, թիվ 74989/01, §36, ՄԻԵԴ 2005-X (քաղվածքներ).

- անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել այնպիսի հանրահավաքին մասնակցելու համար, որը չի արգելվել, քանի դեռ այդ անձն ինքնին որևէ պատժելի արարք չի կատարել (էզելինն ընդդեմ Ֆրանսիայի (Ezelin v. France), թիվ 11800/85, 1991 թ. ապրիլի 26-ի վճիռ, Գալստյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 26986/03, 15.11.2007 թ. վճիռ).

- հասարակական վայրում տեղի ունեցող ցանկացած հանրահավաք կարող է առաջ բերել բնականոն կյանքի որոշակի աստիճանի խաթարում՝ ներառյալ երթևեկության խաթարում, և եթե ցուցարարները բռնի գործողություններ չեն կատարում, ապա կարևոր է, որ իշխանությունները որոշակի աստիճանի հանդուրժողականություն ցուցաբերեն խաղաղ հավաքների նկատմամբ, այլապես Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատության սկզբունքը կիմաստազրկվի (Աշուղյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 33268/03, 17.07.2008 թ. վճիռ, Օյա Ատամանն ընդդեմ Թուրքիայի (Oya Ataman v. Turkey), թիվ 74552/01, 2006 թ. դեկտեմբերի 5-ի վճիռ).

- Կոնվենցիայի 11-րդ հոդվածի հիմնական նպատակը հանրային իշխանությունների կամայական միջամտությունից անհատի երաշխավորված իրավունքների պաշտպանությունն է (Associated Society of Locomotive Engineers and Firemen (ASLEF) v. the United Kingdom, թիվ 11002/05, 2007 թ. փետրվարի 27-ի վճիռ):

Վերոգրյալ իրավակարգավորումների համատեքստում՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2016 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴՈ-1304 որոշմամբ արձանագրել է, որ.

- ոստիկանությունն իր լիազորություններն իրականացնելիս կաշկանդված է մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներով և ազատություններով,

- անձն ազատ է հավաքներին մասնակցելու իրավունքի իրացման տեսանկյունից, սակայն հավասարակշռվածություն պետք է լինի անձի այդ իրավունքի և այլոց իրավունքների ու ազատությունների իրացման միջև: Այդ հավասարակշռվածության ապահովման պարտականությունը մի կողմից կրում է պետությունը, որը համապատասխան մարմինների (ոստիկանության) միջոցով ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, մյուս կողմից՝ հավաքին մասնակցող անձը, որը պետք է դրսևորի այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտող վարքագիծ,

- յուրաքանչյուր կոնկրետ գործով իրավակիրառողի կողմից պետք է գնահատվի՝ արդյո՞ք արարքը կոպտորեն խախտում է հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, և որքանո՞վ են իշխանությունները որոշակի աստիճանի հանդուրժողականություն ցուցաբերել խաղաղ հավաքների նկատմամբ, որպեսզի ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված՝ հավաքների ազատության սկզբունքը չիմաստազրկվի:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը, սահմանադրորեն ճանաչելով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում, գնահատել է հայ ժողովրդի կյանքում վերջինիս բացառիկ դերն ու նշանակությունը, սակայն նման առանձնահատուկ հարաբերությունների հաստատումը դեռևս չի նշանակում, որ Հայ առաքելական սուրբ եկեղեցուն վերապահվել է հանրային իրավական կարգավիճակ, և այն դարձել է պետական, գաղափարական, սոցիալական ոլորտներում լիիրավ մասնակից, քանի որ ինչպես վերջինիս, այնպես էլ այլ կրոնական կազմակերպությունների մասնավոր իրավական կարգավիճակը սահմանելիս՝ պետությունը կրոնին և եկեղեցուն վերապահել է ոչ թե պետաքաղաքական, այլ սոցիալ-մշակութային գործառույթ: Այդ առումով նախագիծն անհրաժեշտ է դիտարկել նաև կրոնական կազմակերպությունների իրավահավասարության տեսանկյունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ նախագծով նախատեսված կարգավորումները կարող են վտանգել և խախտել անձի որոշակի իրավունքի և այլոց իրավունքների ու ազատությունների իրացման միջև առկա հավասարակշռությունը: Հավաքների ազատության նման արգելքի սահմանումը թեև չի բխում հասարակական կարգի պահպանության նպատակից, այդուհանդերձ այն կարող է հիմնավորված լինել այլոց իրավունքների պաշտպանության անհրաժեշտության տեսանկյունից: Հավաքների անցկացումը կարող է խախտել, օրինակ՝ կրոնական ազատության իրավունքը: Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ollinger v. Austria (2006) գործով՝ հավաքին չմասնակցող անձանց իրավունքները կարող են խախտվել հավաքի անցկացման հետևանքով: Այդպիսի իրավունքներից է կրոնական ազատության իրավունքը: Այդ հիմքով հավաքն արգելելու համար անհրաժեշտ է համոզվել, որ հավաքն անմիջականորեն խաթարում է կրոնական ազատության իրավունքի իրականացումը, ընդ

որում՝ լիազոր մարմինը նման վտանգի առկայության դեպքում պետք է հավաքի կազմակերպիչների հետ քննարկի այլոց իրավունքների խախտումներից խուսափելու տարբերակները: Հետևաբար՝ Սահմանադրությամբ և «Հավաքների ազատության մասին» օրենքում նախատեսված՝ «այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության» հիմքով հավաքների ազատության իրավունքի սահմանափակումը իրավաչափ է՝ անկախ առաջարկվող հիմքը օրենքում ամրագրելուց:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում գրեթե բոլոր եկեղեցիները ներառված են ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշմամբ հաստատված ցանկում, որոնց տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ անցկացվելիք հավաքի նկատմամբ առանձին սահմանափակումներ կիրառելու կամ այն արգելելու վերաբերյալ դրույթներ են նախատեսված «Հավաքների ազատության մասին» օրենքի 17-րդ հոդվածով:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանել տուգանք՝ ինչպես վերոնշյալ հավաքների անցկացման, այնպես էլ անհատապես այն անձանց նկատմամբ, ովքեր կիրականացնեն Հայ առաքելական սուրբ եկեղեցու, նրա ծիսակարգի, սրբապատկերների, հոգևոր ներկայացուցիչների նկատմամբ ծաղրական և վիրավորական գործողություններ՝ ներառյալ եկեղեցական պատարագների և այլ ծեսերի ընթացքը խոչընդոտելը:

Հիշյալ իրավակարգավորման բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ ենք համարում այն դիտարկել ՀՀ քրեական օրենսգրքի 160-րդ հոդվածի համակարգային վերլուծության համատեքստում:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 160-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությունը կամ կրոնական ծեսերի կատարումը խոչընդոտելու համար:

Հիշյալ հոդվածի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտը Սահմանադրությամբ ամրագրված՝ մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքի ապահովմանն ուղղված

հասարակական հարաբերություններն են, և տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է նրանով, որ հանցավորը խոչընդոտում է՝

1) կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությունը կամ

2) կրոնական ծեսերի կատարումը:

Ընդ որում՝ կրոնական կազմակերպություն ասելով՝ հասկացվում են ցանկացած դավանանքի հավատացյալների հասարակական միավորումները:

Հարկ է նաև նշել, որ կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությունը խոչընդոտելը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ՝ անգործությամբ, իսկ կրոնական ծեսերի կատարումը խոչընդոտելը կարող է արտահայտվել հավատացյալների վրա ցանկացած տեսակի ներգործությամբ, որը տեղի է ունենում նրանց կողմից որոշակի ծիսակատարությանը մասնակցելուն խանգարելու կամ տվյալ արարողության անցկացումը կամ դրա հետագա ընթացքը խափանելու համար:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ նախագծով նախատեսվող հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են ՀՀ քրեական օրենսգրքի 160-րդ հոդվածով, հետևաբար նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է ձեռնպահ մնալ նախագծերով ներկայացված փոփոխություններից՝ ելնելով վերոշարադրյալ հիմնավորումներից, և առաջարկում գործող օրենքների փոփոխվող հոդվածները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2018 թվականի N 1417 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-380-1.10.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս՝ կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 26
Երևան

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-72-Ն օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով՝

«5) հավաքն անցկացվելու է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնից, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատկանող վանքերից, եկեղեցիներից, պաշտամունքային այլ շինություններից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն կարող է սպառնալ դրանց բնականոն գործունեությանը, և հավաքն ուղղված է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, նրա հոգևորականների, ծիսակարգի կամ դավանանքի դեմ կամ նպատակ ունի կազմալուծել վերջինների բնականոն գործունեությունը»:

2) 3-րդ մասում «կամ 2-րդ» բառերը փոխարինել , «2-րդ կամ 5-րդ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) 180[1] հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1 մասով.

«18.1 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատկանող վանքերի, եկեղեցիների, պաշտամունքային այլ շինությունների բնականոն գործունեությանը սպառնացող հեռավորության վրա չանցկացնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի պահանջներին չենթարկվելը՝

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 180[1] հոդվածի 20-րդ մասում «և 18-րդ» բառերը փոխարինել, «18-րդ և 18.1-րդ» բառերով:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 172-րդ հոդվածով՝

«Հոդված 172. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ անհարգալից վերաբերմունքը

1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնում, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատկանող վանքերում, եկեղեցիներում և պաշտամունքային այլ տարածքներում բացահայտ անհարգալից և արհամարհական վարքագիծը, այդ թվում՝ կրոնական ծիսակարգի բնականոն ընթացքը խոչընդոտելը, հավատացյալներին կամ եկեղեցու հոգևոր ներկայացուցչին ծաղրելը, պաշտամունքային խորհրդանիշերը կամ սրբապատկերներն անարգելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կրկին անգամ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 224-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «169.23» թվից հետո լրացնել «172,» թվով.

2) 2-րդ մասի 1-ին կետը «169.23» թվից հետո լրացնել «172,» թվով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող փոփոխությունների (այսուհետ՝ նաև Փաթեթ) սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն վերապահված կարգավիճակով և այդ կարգավիճակին համապատասխանող օրենսդրական երաշխիքների ամրագրման հրամայականով:

Սահմանադրության նշված հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:*

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

Սահմանադրության նշյալ հոդվածի համատեքստում հանրային իշխանությունը՝ որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերի կիրարկման և կիրառման հիմնական երաշխավոր, պետք է կրի որոշակի պոզիտիվ պարտականություններ սահմանադրական և ազգային-հոգևոր ինստիտուտի կարգավիճակ ունեցող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անվտանգության և Սահմանադրությամբ նախատեսված դերի և գործառույթների բնականոն իրացման ապահովման համար: Հատկապես վերջին շրջանում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դեմ սոցիալական որոշ խմբերի կողմից սկիզբ առած գործողությունները, որոնք դրսևորվում են հանրահավաքների, երթերի, ցույցերի ձևով, վտանգում են Եկեղեցու սոցիալական և ազգային-հոգևոր բացառիկ կարգավիճակը և պարունակում են Եկեղեցու նկատմամբ հանրային բացասական վերաբերմունք ձևավորելու ներուժ: Մինչդեռ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կրոնական և ազգային-բարոյական արժեքների պահպանմանն ու վերարտադրմանը նպատակաուղղված բացառիկ առաքելությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և հանրային համերաշխության լրջագույն կռվաններից մեկն է և հանդիսանում է Սահմանադրության 1-ին անփոփոխ հոդվածով սահմանված պետության ինքնիշխանության սկզբունքի իրացման երաշխիքների համակարգի կարևոր տարրերից մեկը:

Հարկ է նշել, որ ներկայիս օրենսդրությունը սույն խնդրին անդրադարձել է, սակայն՝ հատվածաբար: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրապնդվել են Հայ Առաքելական Եկեղեցու սահմանադրական կարգավիճակը և դրանից բխող

հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ, սահմանվել են այն ոլորտները, որոնց շրջանակներում պետությունը ճանաչում է Եկեղեցու իրավասությունը՝ կրոն, ազգային ավանդույթներ, կրթություն, բարեխնամ գործունեություն, հոգևոր մշակույթ և այլն:

Բացի այդ, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհ հանդիսացող հետևյալ առաքելությունների իրագործմանը՝ (…) գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը:*

Վերոնշյալ իրավադրույթների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունը, ճանաչելով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ազգային-հոգևոր կարգավիճակը և համապատասխան օրենսդրական ակտերի միջոցով պայմաններ ստեղծելով, Եկեղեցու գերակա գործառույթ հանդիսացող հանրային բարոյականության կատարելագործման ոլորտում հոգևոր-բարոյական գործունեություն իրականացնելու համար, ճանաչում է Եկեղեցու դավանաբանության բարոյական կանխադրույթների իրավաչափությունը հասարակության և դրա անդամների կենսագործունեության կանոնակարգման հարցում:

Միևնույն ժամանակ հանրային իշխանության՝ վերը թվարկված հանձնառությունները գերազանցապես կրում են պասիվ բնույթ, այն է՝ միտված են սահմանադրել այն շրջանակները, որոնցում Եկեղեցին ունի ինքնավարություն և պետք է զերծ մնա պետության միջամտությունից: Մինչդեռ, իր հոգևոր և ազգային իրավասության շրջանակներում Եկեղեցու բնականոն և անվտանգ գործառնման ապահովման հարցում պետության դերակատարման հարցը մնացել է բաց: Նման իրավիճակը ոչ միայն ինքնին խնդրահարույց է, այլև պարարտ հող է ստեղծում Եկեղեցու անվտանգության և հանրային կարգավիճակի նկատմամբ ոտնձգությունների համար՝ վկայակոչելով խոսքի, հավաքների և խղճի ազատության իրավունքները:

Փաթեթով նախատեսվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Եկեղեցու անվտանգությունն ու իր սահմանադրական գործառույթներերի բնականոն իրացումն ապահովելու ուղղությամբ: Որպես այս պարտականության գործնական դրսևորում առաջարկվում է «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով հստակորեն սահմանել, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատկանող պաշտամունքային շինություններում և դրանց հարող տարածքում արգելվում է կազմակերպել և անցկացնել Եկեղեցու և նրա ծիսակարգի կամ դավանաբանության դեմ հավաքներ:

Ավելին՝ նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով տուգանք սահմանել ինչպես վերոնշյալ հավաքների անցկացման համար, այնպես էլ անհատապես այն անձանց նկատմամբ, ովքեր կիրականացնեն Հայ Առաքելական Եկեղեցու, նրա ծիսակարգի, սրբապատկերների, հոգևոր ներկայացուցիչների նկատմամբ ծաղրական և վիրավորական գործողություններ՝ ներառյալ եկեղեցական պատարագների և այլ ծեսերի ընթացքը խոչընդոտելը:

Վարչական պատասխանատվության սահմանումը նշված արարքների համար Եկեղեցու հանդեպ պետության վերը նկարագրված սահմանադրական պարտականության կառուցակարգը կդարձնի առավել գործնական և լիարժեք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 41, 42 և 44 հոդվածներով սահմանված, համապատասխանաբար, խղճի և կրոնի, խոսքի և հավաքների ազատության իրավունքները բացարձակ չեն և նշված հոդվածներին համապատասխան՝ ենթակա են սահմանափակման գերակա շահ համարվող պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով՝ սույն պարագայում հանրային իշխանության իրավական միջամտությունը նշյալ իրավունքների իրացմանն արդարացվում և հիմնավորվում է պետական անվտանգության և հանրային բարոյականության պաշտպանության իրավաչափ նպատակով: Հետևաբար, առաջարկվող փոփոխությունը որևէ կերպ չի խախտում վերը մատնանշված իրավունքները:

Առաջարկվող փոփոխությունները համահունչ են միջազգային պրակտիկային: Մասնավորապես, ըստ Սուրբ Աթոռի և Իտալիայի միջև 1884թ. կնքված Լաթերանյան համաձայնագրի՝ Հռոմի Պապի անձը համարվում է սրբազան և անձեռնմխելի, իսկ նրա դեմ ցանկացած ոտնձգություն՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ բանավոր և գրավոր խոսքի միջոցով, պատժելի է, և Իտալիայի կառավարությունն իրավասու է միջամտել և պատասխանատվության ենթարկել իրավախախտ անձին: Խոսքը վերաբերում է նաև Հռոմի Պապի դեմ բողոքի այլևայլ ցույցերին:

Համապատասխանաբար, ուղղափառ և կաթոլիկ եկեղեցու հանրային հեղինակությունը նսեմացնող և հավատացյալների կրոնական զգացումքները վիրավորող արարքների համար բավականին խիստ իրավական կառուցակարգեր են գործում նաև Ռուսաստանում և Լեհաստանում: Առկա են նաև տվյալ պետությունում հատուկ կարգավիճակ ունեցող եկեղեցուն վերաբերող պաշտպանական կառուցակարգերի գործողության այլ օրինակներ ևս:

Առաջարկվող Փաթեթի ընդունման պարագայում կիստակեցվեն Հայաստանի Հանրապետության պոզիտիվ պարտականությունները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտպանության ուղղությամբ, և իրավական կառուցակարգեր կձևավորվեն՝ հակազդելու Եկեղեցու նկատմամբ հանրորեն վնասակար գործողություններին: